

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ  
ՄԱՐԳՈՒՇ ՄԻՐՈՒՍՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՐՄԱՏՆԵՐԻ ՏԱՐԺԱՄԱՆԱԿՅԱ  
ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
(Համադրական կազմություններ)

10.24234/journalforarmenianstudies.v1i64.83

**ԱՄՓՈՓՈՒՄ**

Սույն հոդվածում անդրադարձ է կատարվում արդի հայերենի այն բառաշերտին, որի արմատների և բառակազմական բաղադրիչների իմաստները չեն գիտակցվում ժամանակակից լեզվամտածողությամբ: Այդ կարգի բառերը գրաբարյան կազմություններ են, որոնք իբրև ժառանգություն գրաբարի բառային կազմի հետ փոխանցվել են արդի հայերենին: Դիտարկված գրաբարյան արմատները ժամանակակից հայերենում հանդես են գալիս անկախ և կախյալ գործառույթներով:

ա) անկախ արմատներ - բան, գահ, երկիր, խնդիր, խաղ, հասարակ, նահատակ, նշան, պատարագ և այլն:

բ) կախյալ արմատներ և հիմքեր - ասպ-, աշխար-, դուլ, -հեն, խայտ-, կապուտ-, բաժ-, -հեղձ, գար-, բեկ-, գուճ- (կճ-), թով, ելոյզ և այլն:

Դիտարկված բառարմատների (բառակազմական բաղադրիչների) նշանակություններն արդի հայերենում հնարավոր է բացատրել միայն գրաբարյան բառիմաստներով՝ տարժամանակյա հայեցակետով:

*Բանալի բառեր և արտահայտություններ. բառարմատ, իմաստաբանություն, հին հայերեն, արդի հայերեն, տարժամանակյա հայեցակետ, կախյալ արմատ, անկախ արմատ, իմաստային-թեմատիկ խումբ:*

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Լեզվի բառային կազմի տարժամանակյա ուսումնասիրությունը վեր է հանում հետաքրքրական իրողություններ ինչպես բառերի արտահայտության, այնպես էլ բովանդակության պլանների համատեքստում: Բառերի արտահայտության

պլանում նկատելի է գրաքարյան վերլուծական կառույցների անցումը համադրական կառուցատիպերի (**Խաչատրյան Լ., 2023**), իսկ բովանդակության պլանում արձանագրվել են իմաստափոխական տարաբնույթ փոփոխություններ, որոնց մեկնաբանությունը կարող է ամբողջացնել տարժամանակյա արմատագիտության համալիր բնութագրությունը:

Ժամանակակից հայերենի բառարմատների և բառակազմական բաղադրիչների տարժամանակյա ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որոշակի դեպքերում բառերի նախկին և ներկա իմաստներն զգալիորեն հեռացել են միմյանցից, և նրանց միջև խզում է առաջացել, որոշակի դեպքերում արդիհայերենյան միավորների արմատների իմաստները հնարավոր է մեկնաբանել՝ ելնելով միայն գրաքարյան իմաստներից, մեկ այլ դեպքում՝ արդի հայերենի բառակազմական բաղադրիչների իմաստները մեկնաբանվում են ըստ գրաքարի ձևաբանական հիմքերի կառուցատիպերի (**Բեդիրյան Պ., 2020; Գյուրջինյան Դ., 2020**):

#### **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

Սույն հոդվածում մեր ուսումնասիրությունը կատարելիս ելակետ ենք ընդունել գրաքարյան արմատների նախնական նշանակությունները՝ գործադրելով բառիմաստների մեկնաբանման տարժամանակյա սկզբունքը:

#### **ՔՆՆԱԼԿՈՒՄ**

Մեր ընտրանքում եղած արմատները կարելի է խմբավորել ըստ գործառական արժեքի՝ տարբերակելով *անկախ և կախյալ գործառույթ ունեցող* տեսակները:

#### ***Ա. Անկախ գործառույթ ունեցող արմատներ***

Ժամանակակից հայերենում անկախ գործառույթ ունեն որոշ գրաքարյան արմատներ, որոնք միաժամանակ բառակազմական մակարդակում հանդես են գալիս որպես սերող հիմքեր. դրանցից են՝ *բան, գահ, երկիր, խնդիր, խաղ, հասարակ, նահատակ, նշան, պատարագ* և այլն:

Դիտարկենք այդ արմատների գրաքարյան և արդիհայերենյան իմաստները և մեկնաբանենք դրանց բառակազմական նշանակությունները:

**Բան** – հին հայերենում բազմիմաստ բառ է. նրա իմաստներից են՝ «միտք, կարծիք, բանականություն, մտքերի ծնունդ, խորհուրդ, իմաստություն», հմմտ. Աստուած ամենայնիւ *բան* է (Ագաթ.): Յայտ է եթէ և դու ի նոցա *բանի* ես (Եղ.):

Այս իմաստներն են ընկած արդի հայերենում գործածական մի շարք բառերի հիմքում, ինչպես՝ *բանական* (բանականությամբ օժտված), *բանավոր* (անգիր՝ մտքերի ծնունդով արտաբերվող), *բանաստեղծ* (մտացածին՝ մտքերի ծնունդով ստեղծող), *բանաստեղծություն* (չափածո ստեղծագործություն՝ խոսք), *բանավիճել* (տարբեր կարծիքներ հայտնել), *բանքեր* (որևէ թեմայի շուրջ մտքեր հայտնող՝ բերող) և այլն: Օրինակ՝ Դու՝ 20-րդ և, անտարակույս, հոբելյանական, Դու՝ հյուլեական... Եվ ավելի կարծես *բնական* (ՊՍ): Անգիր մի երգ՝ *բանաստեղծի* սրտի մեջ (ՊՍ): Դիցուք թե նաև դառնում եմ մի օր *Բանաստեղծության* օրենսդիր մի նոր (ՊՍ):

**Գահ** – հին հայերենում բազմիմաստ բառ է. նշանակություններից են՝ «1. բարձրադիր վայր (իբրև բեմ), 2. բարձունք, բարձրավանդակ», հմմտ. Արժանի լինիցին ... յաջակողմն *գահուն* մտեալ՝ խոստացելոց բարեացն հասանել (Ագաթ.): Դիմեաց երամակն *ի գահէ* անտի ի ծովափն (Ղուկ.):

Ժամանակակից հայերենում *գահ* բառի երկրորդ իմաստով կան որոշակի կազմություններ, ինչպես՝ *նախագահ* (առաջին բարձունքում նստող), գահավիժել (բարձունքից ցած իջնել՝ թափվել՝ զլորվել), *գահազուխ* // *գահերեց* (գահով՝ *գահակալություն* (բարձրադիր իշխանություն), *գահակից* (գահին՝ իշխանական դիրքին հավասար մեկը), *գահագուրկ* (գահից՝ իշխանությունից զրկված), *գահավորակ* (արքունական կամ իշխանական բազմոց հանգստանալու համար), *գահույք* (աթոռ թագավորական՝ իշխանական՝ եպիսկոպոսական՝ (առավելաբար) աստվածական) և այլն: Օրինակ՝ Գտավ Մհեր մեկ խորոտ լեռ Մեջ բավիդին Մարութա, Զերդ բանձրիկ *գահ* (ԱԻ): Պետք է վախենալ թագակիր ցուլից, *գահակալ* ձիուց (ՊՍ): Եվ *գահագուրկ* մի ժողովուրդ... Զարդել էր հին գահեր (ՊՍ): ... Ուր *գահավիժված* հիշատակներն են մորմոքում անխոս (ՊՍ):

**Երկիր** – գրաբարում բազմիմաստ բառ է. իմաստներից մեկն է՝ «գետին, հող», հմմտ.. Արար *երկիրն* պտղաբեր յաղտաղտուկս և *զերկիրն* ծարաւուտ ի գնացս ջուրց (Սաղ.):

Արդի հայերենում այդ իմաստները պահպանվել են հետևյալ բառերում՝ *երկրպագել* (հողը համբուրել՝ ի նշան մեկի հանդեպ հարգանքի և պաշտամունքի), *երկրագործ* (հողագործ, հողի մշակությամբ զբաղվող), *երկրագործություն* (հող մշակելու արհեստ) և այլն: Օրինակ՝ Եվ մերպեսներն այդ խոսքերն են *երկրպագում* (ՊՍ): Ես Մարսի վրա զբաղված էի *երկրագործությամբ* (ՊՍ):

**Խնդիր** - Հին հայերենում բազմիմաստ բառ է. իմաստներից մեկն է «որոնում, փնտրտուք, խույզ», որ առավելապես հանդիպում է հարադրությունների մեջ, հմմտ.

Ոչ *ելէք ի խնդիր* տեառն արարչին ձերոյ (Ագաթ.): Ընդ որ նեղեալ Երուանդայ, նա եւ ամրագունի եւս տեղոյ ելեալ ի խնդիր՝ փոխէ զարքունիսն յարեւմուտս կոյս (Խոր.):

Արդի հայերենում **խնդիր** բառը բառակազմական սերող հիմք է դարձել մի շարք նորակազմությունների համար՝ գրաբարյան նախնական իմաստով, ինչպես՝ *վրեժխնդիր* // *քինախնդիր* (քեն՝ վրեժ փնտրող), *քինախնդրորեն* (ոխակալ կերպով), *շահախնդիր* (շահ որոնող), *արկածախնդիր* (արկած որոնող), *բժախնդիր* (բիժ փնտրող) և այլն: Օրինակ՝ Մի՞թե արդեն պարզ չէ և քեզ համար, Որ կարող է սերը ... *վրեժխնդիր լինել* (ՊՍ): Դավադրաբար ոտք էին տալիս, Թիո-թավալզլոր անվի ճաղերում, *Քինախնդրորեն* փայտ ու ձող խրում (ՊՍ):

**Խաղ** – ընկած է *խաղալ* բայի հիմքում, գրաբարում բազմիմաստ բառ է. իմաստներից մեկն է՝ «խայտալ, ոստնել, ճախրել, շարժվել»: Հմմտ. *խաղաց* մանուկն յորովայնի նորա (Ծնն.): *Խաղալն* Արտաշիսի յարեւմուտս, եւ ձերբակալ առնել զԿրիստոս, եւ աւարել ընձեռել Հայոց զպատկերս կռոց (Խոր.):

«Շարժվել» իմաստը պահպանվել է արդի հայերենում գործածական հետևյալ բառերի իմաստային կառուցվածքում, ինչպես՝ *խաղալ* (շարժվել, տեղից տեղ գնալ, տեղափոխվել), *առաջխաղացում* (առաջ շարժել կամ շարժվել, պաշտոնի մեջ առաջ քաշվել՝ բարձրանալ), *հողախաղ* (հողերի շարժ՝ խախտում. հողախախտ), *մնջախաղ* (դիմաշարժով կամ ձեռքի ու մարմնի այլ մասերի շարժումներով զգացմունքներն ու մտքերն արտահայտելու միջոց թատերական արվեստում):

**Հասարակ** - բառի գրաբարյան իմաստներն են՝ «հավասարապես երկու մասի բաժանված, միջին. համաձայն, ընդհանուր, հավասար», հմմտ. Յառաւօտէ մինչև

ցհասարակ օր (Գ Թագ.): Եւ մեք և նոքա հասարակ ժառանգեսցուք զքաղաքամայրն բարեաց (Եդ.):

Այդ արմատով արդի հայերենում ունենք գրաբարից անցած որոշակի բառեր՝ արմատի նախնական նշանակությամբ, ինչպես՝ *հասարակած* (կես բաժին. տարածության և ժամանակի միջին վիճակ), *հասարակություն* (հավասար մարդկանց ամբողջություն), *հասարակական* (ընդհանուր, սովորական, հասարակությանը հատուկ)<sup>1</sup>, *առհասարակ* (ընդհանրապես, ընդհանուր առմամբ): Օրինակ՝

Էնպես տեղ էլ կա, որ ամբողջ *հասարակություններով* հավաքվում են, գնում են շրջապատում անտառի որոշ մասերը (ՀԹ): Եվ երկրագնդի պտտվող կողմն՝ *հասարակածի* լայնության վրա սառցե գրիչով մեծատառ գրվեց (ՊՍ): Ուղեղից համեղ կուտ սարքել, կուտից՝ կերակուր *հասարակական* (ՊՍ):

**Նահատակ** – բառի գրաբարյան իմաստներն են՝ «նախահարձակ, առաջին գծում մարտնչող, առաջամարտիկ, մարտիրոս. քաջ, առաքինի», հմմտ. Հրամայեաց *զնահատակն* յառաջ կացուցանել (Բ Մակ.): Ջարեհ էր այր սեգ և յորս էրեոց *նահատակ*, իսկ առ պատերազմունս վատ և տաղտուկ (Խոր.):

Արդի հայերենում *նահատակ* բառը գործածվում է այլ նշանակությամբ՝ «հավատի համար զոհված մարդ, փխբ. որևէ գործի կամ գաղափարի համար իրեն զոհաբերած մարդ»: Այդ արմատով են կազմված *նահատակել* (նահատակ դարձնել, տանջել, սպանել), *նահատակորեն* (նահատակի նման՝ օրինակով), *նահատակություն* (նահատակ լինելը, փխբ. 1. կյանքի նվիրաբերում որևէ վեհ գաղափարի, 2. չարչարանք, տանջանք, տառապանք), *նահատակում* // *նահատակություն* (նահատակելը, նահատակվելը) և այլն:

*Նահատակ* մեր հոր ցնորքը նվիրական Եվ իմ հոգսերի վերջին առարկան (ՀԹ): Կգաս իբրև բառաբանում ու փառք նրանց համար, Որոնք դյուցագնորեն... *նահատակվել են* (ՊՍ): Եղիշեն այնքան եղերական կերպով երգեց հայոց քաջերի *նահատակությունը* Ավարայրի դաշտում (Բ):

<sup>1</sup> *Հասարակական* բառը գրաբարում նշանակում է «հանրական, ընդհանուր», հմմտ. Չեմ արժանի ի քեն և ոչ *հասարակական* կերակրոյն վարձու (Նար.):

**Նշան** – Արմատն է *նիշ*, որ հին հայերենում նշանակում է «կետ, հետք, նշմարելի բան», հմմտ. Սակաւ ինչ արեան *նիշ* ունելով յաչսն (Խոր.): *Նշան* բառը հին հայերենում բազմիմաստ բառ է. իմաստներից են՝ «որոշարկող նշան, կոահելու դրոշմ, կնիք, հետք, բիծ, սպի» և այլն: Հմմտ. *Նշանս* սահմանեաց հաստատեաց այսպէս (Խոր.): Դրանից է *նշանաւոր* բառը՝ «ուրիշներից տարբերակող նշան ունեցող, որոշակի նշաններով տարբերվող. ականավոր, հռչակավոր» և այլն: Հմմտ. Եւ ինքն (Բէլ) գլխանոց ագուցեալ երկաթի՝ *նշանաւորօք* վերջիւք (Խոր.):

Այդ իմաստները պահպանվել են արդի հայերենի *զինանշան* (որևէ պետության՝ քաղաքի՝ իշխանության՝ տոհմի խորհրդանիշը՝ խորհուրդ պարունակող նշանը, որ պատկերվում է դրոշի, վահանի կամ այլ առարկաների վրա), *նշանակել* (մի բան որևէ նշանով արտահայտել), *նշանակետ* (իբրև նպատակ ընտրված որևէ նշան), *նշանավոր* // *նշանակիր* (որևէ նշան՝ խորհրդանշան կրող), *նշանացի* (նշաններով կատարվող, տեղի ունեցող, իբրև նշան ծառայող շարժումներով), *աննշան* (որևէ նշան չունեցող. ոչ նշանավոր, չնշանակված. անհայտ) և այլն: Օրինակ՝ Դու կարող ես տիրել արար աշխարհին, Բայց այդ երբեք հզոր սիրու չէ *նշան* (ԱԲ): Եվ դա ի՞նչ է *նշանակում*. Այն, որ ձայնը պիտի լսենք մենք գիտության (ՊՍ):

**Պատարագ** - հին հայերենում բազմիմաստ բառ է. նշանակում է 1.«զոհ՝ մատաղ՝ մատուցած աստծուն», հմմտ. Մատոյց *պատարագ* Աստուծոյ հօր իւրոյ Իսահակայ (Ծնն.): 2. «Նվեր, ձոն». Տարայք առն *պատարագս* ռետին<sup>2</sup> և մեղր (Ծնն.): Ժամանակակից հայերենում այն նշանակում է «քրիստոնեական եկեղեցու գլխավոր պաշտամունքային արարողություն. ժամերգություն. ժամասացության ընթացքում հնչող երաժշտություն՝ եղանակ», ինչպես՝ Լա՛վ, տե՛ր հայր, այդ էլ քեզ եմ կտակում, Որ ինձ միշտ հիշես քո *պատարագում* (ՀԹ): Օրն էսօր տոն-կիրակի, ժամն էր կանգնած *պատարագի* (ԱԲ):

#### Բ. Կախյալ գործառույթ ունեցող արմատներ և հիմքեր

<sup>2</sup> *Ռետին* բառը նույնպես ենթարկվել է իմաստափոխության. գրաբարում նշանակում է «բույսերից քամված մածուցիկ խեժ՝ բալասան»:

Ժամանակակից հայերենում որոշ արմատներ, որոնք գրաբարյան ժառանգություն են և մեկնաբանվում են նախնական՝ գրաբարյան իմաստներով, հատկանշվում են կախյալ գործառնությամբ. բառային ինքնուրույնություն չունեն: Դրանցից են՝ *ասպ-*, *աշխար-*, *բեկ-*, *բաժ-*, *-գար-*, *գուճ-* (*կճ-*), *-դուլ*, *խայտ-*, *կապույտ-*, *-հեղձ*, *-հեն*, *թով-*, *ելոյզ-* և այլն:

Դիտարկենք այդ արմատները որպես բառակազմական բաղադրիչներ:

**Աշխար-** Հին հայերենում նշանակում է «լաց, կոծ, վիշտ, ողբ, սուգ, վայնասուն», հմմտ. Տայր հրաման՝ կոծ մեծ և *աշխար* դնել շուրջ զսպանելով դիակամբն (Բուզ.):

Այդ իմաստները պահպանվել են արդի հայերենին փոխանցված հետևյալ բառերում՝ *ապաշխարել* (գործած մեղքերի՝ հանցանքի համար զղջալ՝ թողություն հայցել), *ապաշխարանք* // *ապաշխարություն* (ապաշխարելը, մեղքերի թողության հայցում): Օրինակ՝ Նորատի մորը՝ շուտ *ապաշխարանք*, Աղվորիկ մի հարս, բարի տատություն (ՊՍ):

**Ասպ** – որպես իրանական փոխառություն՝ դեռևս հին հայերենում գործածվում էր «ձի, նժույգ, երիվար» իմաստով. հանդես է գալիս մի շարք բառերի կազմում, ինչպես՝ *ասպետ* (հեծյալ զինվորական՝ ազնվական ծագումով), *ասպար* (սառը զենքից պաշտպանվելու վահան), *ասպարեզ(ս)* «ձիու ընթացք՝ վարգ. հրապարակ. ձիարշավարան» (Ի մերձենալ ինձ *յասպարէս* երկրին Քաբրաթայ (Ծնն.), *ասպազէն* «ձիու զրահը՝ զարդը» (Իսկ նորա առեալ *զասպազէնն* կապէր ի թիկունս իւր և անցանէր (Ագաթ.), *ասպանդակ* «թամբի երկու կողմերում հեծյալի ոտքերի հենակետերը» (Մերձեցան ոտք նորա *յասպանտակն*, ուր եղեալ էին ոտք սրբոյն (ՆՀԲ), *ասպատակ* «ձիով ավարառություն կատարող» (Մի՛ երկնչիք *յասպատակէ* քաղդէացւոցն, ի ձայնէ *ասպատակի* նորա (Իմաս.), *ասպատակել* «ձիով ավարառություն՝ թալան կատարել» (*Ասպատակեալ* ընդ զհիւրկանեանսն առեալ աւերէին (Խոր.):

Վերոբերյալ բոլոր կազմությունները գրաբարյան իմաստներով արդի հայերենում գործածական են. դրանց իմաստային մեկնաբանությունը տրվում է՝ ելնելով հիմնական բաղադրիչի նախնական նշանակությունից: Օրինակ՝ Կյանքն է դարձել գործի, փառքի թոխչների *ասպարեզ* (ԱԻ): Թագավորը այցի ելավ ...

Գավառներին ... ճոխ *ասպետներ*-հետևորդներ՝ Հագած-կապած զենք ու *ասպար* (ԱԻ):

**Բաժ** - ընկած է *բաժանել* բայի հիմքում. նշանակում է «մաս, հատված, բաժին», հմմտ. Գուցե ընդ որդւոյն տալոյ՝ զնա *բաժառնուցու* (Եզն.):

Արդի հայերենում այդ իմաստները պահպանվել են *բաժանել* (ընդհանուրը մասերի բաժանել), *անբաժան* (մասերի չբաժանվող), *անբաժանելի* (մեկ ամբողջություն, որ հնարավոր չէ մասերի բաժանել), *բաժանում* (միմյանցից զատվելը՝ առանձնանալը) և այլն: Օրինակ՝ Ուզում են կիսել, *բաժանել* նրանց, Իբրև շահավետ մի կռվախնձոր (ՊՍ): Ու եթե լլկվել՝ *բաժանման* ցավից, Ո՛չ թե թշնամուց (ՊՍ): *Անբաժան* է քեզից քո թովչանքը (ՊՍ):

**Բեկ** – հին հայերենի բեկանել բայի արմատն է, նշանակում է «կտրված, ջարդած, ջարդված, խորտակված», հմմտ. Զկոյրն, զկադն և զբեկն (ՂԵԱԽ):

Այդ արմատով արդի հայերենում ունենք հետևյալ բառերը՝ *բեկել* (կտրել), *բեկում* (դիմադրությունը կտրելով՝ շրջադարձ կատարել), *բեկանել* (1. ուղղությունը փոխել, կտրել, 2. ընդունված որոշումը չեղարկել), *բեկյալ* (կտրված, ջարդված), *բեկբեկուն* (կտրատվող, ծեծծեքուն), *բեկոր* (ջարդված առարկայի մաս՝ կտոր), անբեկանելի (անշրջելի, հաստատուն) և այլն: Օրինակ՝ *Բեկանեմ* շանթեր իմ գլխի վրա (ՊՍ): Ոչ մեր սրտում՝ երջանկություն, Ոչ մեր կյանքում՝ մեծ *բեկում* (ՊՍ): Ստվերի պես՝ դու օրորուն, դու - շորորուն, *բեկբեկուն* (ՊՍ):

**Գար** – գրաբարում նշանակում է «կոր, ծուռ, թյուր», հմմտ. Զեղջ և ապաշաւ լինիցի առ ի *գար* հայելոյ իւր յուղիղ յարաբաժսն (ՆՀԲ):

Այս արմատով գրաբարում ունենք որոշ կազմություններ, որոնք փոխանցվել են արդի հայերենին, ինչպես՝ *խելագար* (խելքը՝ ուղեղը խանգարված), *խելագարվել* (խելագար դառնալ), *մոլագար* (կատաղի կերպով շեղված), *մտագար* (միտքը խանգարված. խելացնոր), *ցավագար* (ցավից խանգարված՝ մտամոլոր), *խանգար* (ավեր, վնաս, խռովահույզ, ավերված, պիղծ), *խանգարել* (եղծել, ավերել, ապականել, աղավաղել) և այլն: Օրինակ՝ Աղջիկը նրան ձայն տվեց... -Ա՛յ խենթ, *խելագար*, Ոսկին պահել եմ Մելիքի համար (ՀԹ): Ա՛յ մեր, *խելագարվեցի՞ր*, քեզ ի՞նչ պատահեց (ՀԹ):



**Գուճ** – հին հայերենում նշանակում է «ծնկի ծալքը, ծունկ, ծունր»։ հանդես է գալիս դարձվածքների և անվանաբայական հարադրությունների կազմում, ինչպես՝ *ի գուճս իջանել* կամ *հարկանել* (ծնրադիր խոնարհվել, ծնկի գալ, ծունր իջնել՝ իբրև հարգանքի նշան)։ Հմմտ. *Ի գուճս իջեալ* աղաչեին կամ երկիր պագանեին աստուծոյ (Յուդիթ.)։

Նույն արմատից է *ընկճել* բայը, որ արդի հայերենում գործածվում է գրաբարյան նշանակությամբ՝ «ծնկի իջեցնել, ձեռքի տակ պահել, ճնշել» իմաստներով։ Օրինակ՝

*Ընկճող* հայացքով իր շուրջն է նայում։ Տարածեց ահա Անգուսպ խռովքից դողացող աջը քնարի վրա (ՀԹ)։ Առանց *ընկճելու* երկրի թշնամուն նրա սուրը երբեք չի մտել պատյան (ԱԻ)։

**Դուլ** – հին հայերենում նշանակում է «դադար, հանգիստ, անդորր», հմմտ. *Դուլ* և *դադար* քեզ ոչ գտանիցի (Եսայ.)։

Արդի հայերենում գործածական *անդուլ* բառը մեկնաբանվում է գրաբարյան *դուլ* արմատի նշանակությամբ՝ «անդադար, անհանգիստ, անխոնջ, հանապազ» իմաստներով, ինչպես՝ Դարերի *անդուլ* անցորդ եղար (ԵԶ)։

**Թուլ** – որոշ բառերի արմատական իմաստները ենթարկվել են անցման կամ շրջման, դրանց գրաբարյան և արդիհայերենյան իմաստների միջև խզում է արձանագրվել (Աղայան Էդ., 1984)։ Օրինակ, *թուլեմ* (օձերին հմայել՝ դյուրեղ՝ կախարդել, կախարդելով մեղմել) բայից է *թուլիչ* բառը, որ հին հայերենում նշանակում է «օձերին հմայող՝ զգոնացնող. կախարդ», հմմտ. Զի *զթուլիչ* օձահար՝ ո՞վ ապաշաւէ (Սիրաք.)։ Նա աւանիկ տեսանեմք (զօձն) ի հնարագիտութենէ *թուլչաց* զզոնացեալ (Եզն.)։

Արդի հայերենում *թուլել* բայի *թուլ-* արմատը չի գիտակցվում. *թուլիչ* բառը ձեռք է բերել հատկանշային հետևյալ իմաստները՝ «գրավիչ, թուլչանք պարունակող, կախարդական, հմայիչ», ինչպես՝ Օ՛, Վարդապետ անվեղար, Որ խաչի տեղ վրդովիչ, Չայնի հովիվ լոկ եղար՝ Ձեռքիդ սրինգ մի *թուլիչ* (ԵԶ)։

**Խայտ** – հին հայերենում նշանակում է «գույն, պիսակ, խալ», հմմտ. Որ ոչ իցէ *խայտ* և պիսակ յայծեաց (Ծնն.)։

*Խայտ* բառի հինհայերենյան իմաստն է ընկած արդի հայերենում գործածական հետևյալ բառերի իմաստային կառուցվածքում, ինչպես՝ *կարմրախայտ* (կարմիր խալեր ունեցող), *խայտաճամուկ* // *խայտաբղետ* (գույնզգույն խալեր՝ խայտեր ունեցող), *խայտառակ* (դեմքին սև խալեր քսելով՝ ման ածել որպես նշավակ՝ առակ. փխբ. ծանր, դժվարին, անտանելի), *խայտառակել* (խայտառակ դարձնել), *խայտառակություն* (խայտառակ դարձնելը) և այլն: Օրինակ՝ Ճեմարանի բակում արձակ՝ Խոսվածքների, տարազների *Խայտաբղետ* հավաքածու (ՊՍ): Եվ հագուստը *խայտաճամուկ* Մերթ ծալեծալ, փոթ-փոթ գալիս (ՊՍ): Կան *խայտառակ* ժամանակներ, Երբ մարդ եթե իր բերանին կապ չի դնում, Ապա նրա ձեռք ու ոտքին ուրիշներն են դնում կապանք (ՊՍ):

**Կապուտ**– գրաբարում նշանակում է «ավար, գողոն, թալան, թշնամուց խլած ինչ. այն ընկած է *կապտեմ* բայի հիմքում. բայիմաստն է՝ «ավար առնել, կորզել, կողոպտել, յափշտակել», ինչպես՝ Արագ արագ *կապտեսջիր* (Եսայ.):

Գրաբարում այդ իմաստով կան որոշ բառեր, որոնք հին հայերենի բառային կազմի հետ փոխանցվել են արդի հայերենին. այդ բառերի իմաստները մեկնաբանվում են նախնական նշանակություններով, ինչպես՝ *անկապտելի* (անկողոպտելի, անկորուստ. անբաժանելի) (Վնասակար եմ առ պսակն *անկապտելի* (Նար.), *դիակապուտ* (դիակների զարդերը կողոպտող) (*Դիակապուտս* առաքել տիկինն (Շամիրամ) յետ յաղթութեանն ի տեղի ճակատուն խնդրել ի մեջ դիականցն զըղձալին իւր (Խոր.): Մի ամբողջ ազգի հեշտորեն զրկում են իր *անկապտելի* երգից ու պարից (ՊՍ):

**Հեղձ** – հինհայերենյան բառիմաստն է «խեղդելը, խեղդվելը», անկախ գործածությամբ չի հանդիպում: *Հեղձ* արմատն ընկած է մի շարք կազմությունների հիմքում, ինչպես՝ *հեղձուկ* (խեղդելը, խեղդոց), *հեղձուցիչ* «խեղդող» (Ասե զհեղձուցիչ ջուրցն (Ագաթ.), *հեղձամղձուկ* «խեղդելով մահվան տագնապ հարուցել. շնչասպառ անել» (Ընդ այսակիր քարակոշկոճ *հեղձամղձուկ* եղկելի անձանցն ի քեն ողորմեալ (Նար.) և այլն:

Վերոբերյալ բառերը գործածական են արդի հայերենում, որոնք պահպանում են գրաբարյան իմաստները: Օրինակ՝ Որ մեզ խեղդում են կրծքի չբուժվող

*հեղձուկի* նման (ՊՍ): Հեռու ժխորից քաղաքի, ծխից *հեղձուցիչ*... Ես չափավորում եմ խոռվքն իմ հոգու (ՊՍ):

**Հեն** – գրաբարյան իմաստներն են՝ «ավագակ, ավագակախումբ, ասպատակ, ասպատակություն», ինչպես՝ Իսկ Գրիգոր իշխանն Հայոց խաղաղացոյց զաշխարհս Հայոց յամենայն *հինից* յարձակմանց (Ղեւ.):

Ժամանակակից հայերենում այդ արմատով (և նրա նախնական նշանակությամբ) գործածական են *ծովահեն* (ծովերի վրա ավագակություն կատարող), *օդահեն* (օդանավ առևանգող), *մշակութահեն* (ուրիշների մշակույթը կողոպտող) և այլ բառեր: Օրինակ՝ Կան ցամաքի գողեր, կան և ջրի գողեր, այսինքն՝ *ծովահեններ* (ԺՀԼԲԲ):

Արդի հայերենում կան զգալի թվով բառեր, որոնց բաղադրիչները համընկնում են գրաբարի ձևաբանական հիմքերին. ուստի այդ կարգի բաղադրիչների իմաստները մեկնաբանելիս պետք է հաշվի առնել գրաբարի ձևաբանական հիմքերի բառակազմական արժեքը (**Խաչատրյան Լ., 2018**):

Արդի հայերենում գործածական *ելուզակ*, *ծինեղույզ*, *ընդեղուզվել* և նմանատիպ այլ բառերի *ելույզ* բաղադրիչի իմաստը հնարավոր չէ մեկնաբանել՝ առանց դիմելու գրաբարի լեզվական իրողություններին: Գրաբարում *ելանել* բայի պատճառականի անորոշ դերբայն է *ելուցանել*, որից հնչյունափոխությամբ՝ *ելուզանել*: Հմմտ. Ձայնաւորք ասին, վասն զի ձայնս յինքեանց անպակաս *ելուզանեն* (ՆՀԲ):

*Ելուզանել* բայի երկրորդ հիմքն է *ելոյզ*: Դիտարկված բառերում ձևաբանական հիմքը (ելոյզ) կատարում է բառակազմական հիմքի դեր: Հմմտ. Պարսիկների և օսմանցիների թերի թողած բարբարոսությունները լրացնում են ջալալի կոչված *ելուզակները* (Բ): Նրա մեջքին գցել էին կարմիր թաղիքե սթար, վրան փղոսկրով և արծաթով *ընդեղուզված* թամբը (ՍԶ):

#### ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դիտարկված բառարմատները (բառակազմական բաղադրիչները) ժամանակակից հայերենում, ըստ բառակազմական-գործառական դերի, բաժանվում են երկու խմբի. արմատներ, որոնք անկախ գործածություն ունեն, և արմատներ, որոնք անկախ գործածություն չունեն և սահմանափակվում են

բառագործածության շրջանակներում: Այդ կարգի բառերի (արմատների) նշանակություններն արդի հայերենում ժամանակակից լեզվամտածողությամբ հնարավոր չէ բացատրել, քանի որ այդ արմատները (բառակազմական բաղադրիչները) բառերի արտահայտության պլանում պահպանել են գրաբարյան իմաստները, ուստի դրանց մեկնաբանությունը տրվում է ըստ գրաբարյան բառիմաստների՝ հետազոտության տարժամանակյա եղանակով:

Հետազոտության այս եղանակով կարելի է ուսումնասիրել ժամանակակից հայերենի արմատագիտության առանցքային հարցերը՝ նպաստելով տարժամանակյա իմաստաբանության բնութագրության ամբողջացմանը:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Աղայան Էդ. (1984)**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, ԵՊՀ հրատ.:
2. **Բեդիրյան Պ. (2020)**, Բառերի խորհրդավոր աշխարհից, Երևան, «Լույս» հրատ.:
3. **Գյուրջինյան Դ. (2020)**, Զարմանալի հայերեն, Երևան, «Էդիթ Պրինտ» հրատ.:
4. **Խաչատրյան Լ. (2023)**, Գրաբարեան յարադրութիւնների փոխակերպումը բարդութիւնների Մակբայ+բայ կաղապարով (Տարժամանակեայ հայեցակետ), Բազմավեկ հայագիտական հանդես, հ. 1-2, Վենետիկ, էջ 253- 271:
5. **Խաչատրյան Լ. (2018)**, Գրաբարի ձևաբանական հիմքերի բառակազմական արժեքը, «Էջմիածին» հանդես, Ս. Էջմիածին, 2018, N 2, էջ 54-67:

#### REFERENCES

1. **Aghayan Ed. (1984)**, Y'ndhanowr ev haykakan bar'agitowt'yown /General and Armenian lexicography/, Yerevan, YSU ed.
2. **Bediryan P. (2020)**, Bar'eri xorhrdavor ashxarhic /From the mysterious world of words/, Yerevan, “Luys’ ed.
3. **Gyurjinyan D. (2020)**, Zarmanali hayeren /Amazing Armenian/, Yerevan, “Edit Print” ed.

4. **Khachatryan L. (2023)**, Grabarean yaradrowt'iwnneri p'oxakerpowmy' bardowt'iwnneri Makbay+bay kaghaparov (Tarjhamanakeay hayecake't) /Transformaton of Old Armenian analytical constructions into compound words with a pattern Adverb + verb > verb (Dyachronic aspect)/, Bazmavep, Review of Armenian Studies, vol. 1-2, Venetik, p. 253- 271:
5. **Khachatryan L. (2018)**, Grabari d'evabanakan himqeri bar'akazmakan arjheqy' /The word-building value of the morphological bases of Grabar/, "Ejmiatsin" journal, S. Ejmiadzin, N 2, p.54-67:

### ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**ա) Աստվածաշունչ մատեան հին և նոր կտակարանաց** (Հայաստանի

Աստուածաշնչային ընկերութիւն, Մեծ Բրիտանիա, 1997)

Եսայ – Եսայի

Բ. Մակ.- Գիրք Մակաբայեցոց Բ

Իմաս.- Իմաստութիւն Սողոմոնի

Ծնն.- Գիրք Ծննդոց

Ղեւտ.- Ղեւտականք

Ղուկ.- Աւետարան ըստ Ղուկասու

Յուդիթ - Յուդիթ

Սաղ.- Գիրք սաղմոսաց Դարթի

Սիրաք – Գիրք Սիրաքայ

**բ) Ժամանակակից հայերենի հեղինակներ**

ԱԻ – Ավ. Իսահակյան

ԵԶ – Ե. Չաբենց

ՀԹ – Հովհ. Թումանյան

ՊՍ – Պ. Սևակ

ՍԶ – Ստ. Զորյան

Բ – Բաֆֆի

**Մատենագիտական երկեր**

Ագաթ.- Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տփլիս, 1909:

Բուզ.- Փաւստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913:

Եզն.- Եզնկայ Կողբացոյ Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826:

Եղ.- Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Ե., 1957:

Խոր.- Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Տփլիս, 1913:

Ղեւ.- Պատմութիւն Ղեւոնդեայ Մեծի Վարդապետի Հայոց, Ս.Պետերբուրգ, 1887:

Նար.- Մատենանոց Պոլսեան Գրադարան, Պոլս, 1947:

### Բառարաններ

Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976:

Առձեռն բառարան հայկազնեան լեզուի (ԱԲ), երկրորդ տպագրութիւն, Վենետիկ, Ի Սուրբ Ղազար, 1865:

Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (ԺՀԼԲԲ), հհ. 1-4, Ե., 1969 – 1980:

Համաբարբառ հին և նոր կտակարանաց, աշխատասիրութիւն Թադէոս վարդապետի Աստուածատուրեան Արապկերցոյ, ի տպարանի Առաքելական արքայ Սրբոց Յակովբեանց, Երուսաղէմ, 1895:

Նոր բառգիրք հայկազնեան լեզուի (ՆՀԲ), Երկասիրութիւն երից վարդապետաց,

Գ.Աւետիքեան, Խ.Սիրմէլեան, Մ.Աւգերեան, հհ. Ա-Բ, ի Վենետիկ, ի տպարանի Սրբոյն Ղազարու, 1836 -1837:

Лалик Хачатрян, Маргуш Мирумян

Диахроническая семантика корней современного армянского языка

(Синтетичные образование)

Закключение

*Ключевые слова и выражения:* корень, семантика, древнеармянский, современный армянский, диахроническая точка зрения, зависимый корень, самостоятельный корень, семантико-тематическая группа.

В данной статье рассматриваются лексика современного армянского языка, корни и лексические компоненты которого не объясняются современным языковым мышлением.

Слова такого рода являются древнеармянскими образованиями, которые по наследству перешли в современный армянский язык вместе с лексикой грабара. В

данной статье мы взяли за отправную точку исходные значения древнеармянских корней, применив диахронический принцип толкования лексики.

Наблюдаемые древнеармянские корни в современном армянском имеют самостоятельную и зависимую функцию:

а) самостоятельные корни - некоторые грабарские корни имеют в современном армянском языке самостоятельную функцию, одновременно выступая в качестве порождающих основ на словообразовательном уровне. Среди них: *րաւն*, *գաւհ*, *երկիր*, *խնդիր*, *խաղ*, *հաւաքաւիկ*, *նահաւաքաւիկ*, *նշան*, *ստանաւոր* и др.:

б) зависимые корни и основы - в современном армянском языке некоторые корни, являющиеся грабарским наследием и интерпретируемые с оригинальными грабарскими значениями, характеризуются зависимой функцией: у них нет вербальной независимости. Среди них: *սուշ-*, *աշխար-*, *բեկ-*, *բաժ-*, *-գար-*, *գործ-* (*կծ-*), *դուլ*, *խայտ-*, *կապույտ-*, *-հեղձ*, *-հեն*, *թով-*, *երոյգ-* и др.:

Значения наблюдаемых корней (лексических компонентов) в современном армянском языке могут быть объяснены только древнеармянскими значениями с диахронической точки зрения.

Lalik Khachatryan, Margush Mirumyan

Diachronic semantics of the roots of Modern Armenian

(synthetic formation)

Conclusion

**Key words and expressions:** *root, semantics, Ancient Armenian, Modern Armenian, diachronic point of view, dependent root, independent root, semantic-thematic group.*

This article deals with the vocabulary of the Modern Armenian language, the roots and lexical components of which are not explained by modern linguistic thinking. Words of this kind are Ancient Armenian formations, which were inherited into the Modern Armenian language along with the Ancient Armenian vocabulary. In this article, we took the original meanings of Ancient Armenian roots as a starting point, applying the diachronic principle of interpretation of vocabulary.

The observed Ancient Armenian roots in Modern Armenian have independent and dependent functions.

a) independent roots - Some Ancient Armenian roots have an independent function in modern Armenian, which at the same time act as generative bases at the lexical level. Among them are: *բան, զահ, երկիր, խնդիր, խաղ, հասարակ, նահատակ, նշան, պատարագ* etc.

b) dependent roots and stems- In modern Armenian, some roots, which are Ancient Armenian heritage and are interpreted with original, Ancient Armenian meanings, are characterized by a dependent function: they do not have verbal independence. Among them are - *ասպ-, աշխար-, բեկ-, բաժ-, -գար-, գուճ- (կճ-), դուլ, խայտ-, կապույտ-, -հեղձ, -հեն, թով-, ելոյգ-* etc.

The meanings of the observed roots (lexical components) in Modern Armenian can only be explained by the Ancient Armenian meanings from a diachronic point of view.

**Լալիկ Խաչատրյան** – Բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ, Լեզվաբանական հետազոտությունների լաբորատորիայի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ ընդհանուր լեզվաբանություն, հայոց լեզվի պատմություն, հին հայերեն, հայոց լեզվի տեսություն, բառագիտություն, բառարանագրություն: Հեղինակ է 20 գրքի (մենագրություններ, դպրոցական և բուհական դասագրքեր, բառարաններ) և շուրջ 200 հոդվածի. [lingualal51@mail.ru](mailto:lingualal51@mail.ru)

**Մարգուշ Միրումյան**– Մանկ. գիտ. թեկնածու, Խ. Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարանի մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ: Գիտական հետաքրքրությունները՝ հայոց լեզու, բառագիտություն, հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, բառարանագրություն: Հեղինակ է 6 գրքի (հայոց լեզու, բուհական դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ, բառարան) և շուրջ 50 գիտական հոդվածի: [mirumyan1951@mail.ru](mailto:mirumyan1951@mail.ru)

**Лалик Хачатрян** - Д. филол. н., профессор, заведующий лаборатории лингвистических исследований Армянского государственного педагогического университета им. Х. Абовяна. Научные интересы; общая лингвистика, история армянского языка, древнеармянский язык, теория армянского языка, лексикология, лексикография.



Автор 20 книг (монографии, школьные и вузовские учебники, словари) и около 200 статей;  
[lingualal51@mail.ru](mailto:lingualal51@mail.ru)

**Маргуш Мирумян** - Кандидат педагогических наук, доцент кафедры родного языка и методики его преподавания Армянского государственного педагогического университета им.Х.Абовяна. Научные интересы; армянский язык, методика армянского языка, лексикология, лексикография. Автор 6 книг (монографии, вузовские учебники, словари) и около 50 статей. [mirumyan1951@mail.ru](mailto:mirumyan1951@mail.ru)

**Lalik Khachatryan** – Doctor of Sciences in Philology, Professor, Head of Linguistics Research Laboratory of Armenian State Pedagogical University after Kh. Abovyan. Scientific interests; general linguistics, history of armenian language, Old armenian, theory of armenian language, lexicology, lexicography. Author of 20 books (monographies, school and university textbooks, dictionaries) and nearly 200 articles; [lingualal51@mail.ru](mailto:lingualal51@mail.ru)

**Margush Mirumyan** - Candidate of Pedagogical sciences, docent of the department of Mother tongue and its teaching methodology. Scientific interests; armenian language, methodology of armenian language, lexicology, lexicography. Author of 6 books (monographies, university textbooks, dictionaries) and nearly 50 articles; [mirumyan1951@mail.ru](mailto:mirumyan1951@mail.ru)

Խմբագրություն է ուղարկվել 05.12.2023թ.

Հանձնարարվել է գրախոսության 10.12.2023թ.

Հրապարակման է ներկայացվել 05.06.2024թ.